ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«17» մայիսի 2017 թվականի № 70-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի № 395-Ա ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի № 19-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված ընդերքի տեղամասերի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգին համապատասխանեցնելու նպատակով գործողություններ իրականացնելու մասին» № 395-Ա հրամանի.

1) 1-ին կետից հանել «տրամադրման» բառը, իսկ «էներգետիկայի» բառը փոխարինել «էներգետիկ ենթակառուցվածքների» բառերով.

2) 2-րդ կետի 1-ին ենթակետում «պետական տեսչությանը» բառերից հետո լրացնել «և ընդերքի գործակալությանը» բառերով.

3) 3-րդ կետում «պետական տեսչության» բառերը փոխարինել «գործակալության» բառով.

4) 3-րդ կետի 1-ին ենթակետում «Նախարարության աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության կողմից տրամադրվող ցանկերը և նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ից ու նախարարության աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալությունից» բառերը փոխարինել ««Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ից» բառերով.

5) 3-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ ենթակետ.

«3) սույն հրամանի 4-րդ կետի 1-ին ենթակետում նշված եզրակացությունները ստանալուց և 2-րդ ենթակետում նշված քննարկումներն անցկացնելուց հետո ամփոփել գործերը և մինչև հաջորդ ամսվա տասներորդ օրը Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին ներկայացնել առաջարկությունների փաթեթ՝ կցելով համապատասխան կազմակերպությունների թույլտվությունների մեջ փոփոխություններ կատարելու մասին մեկ ընդհանուր հրամանի նախագիծը:».

6) 4-րդ կետի 1-ին ենթակետում «, նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությունից ստացված եզրակացության հետ միասին, ներկայացնել աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալությանը՝ սահմանված կարգով ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում փոփոխություններ կատարելու նպատակով» բառերը փոխարնել «ներկայացնել նախարարության աշխատակազմի ընդերքի գործակալությանը» բառերով.

7) 4-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) ճշգրտված ծայրակետային կոորդինատների և ֆոնդում առկա նյութերում կոորդինատների մեջ անհամապատասխանությունների դեպքում՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախարարության աշխատակազմի ընդերքի գործակալության հետ համատեղ անց կացնել քննարկումներ՝ ճշգրտումներ կատարելու նպատակով:».

8) 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

9) 6-րդ կետում «ընդերքի պետական տեսչության, ընդերքի տրամադրման գործակալության պետերին» բառերը փոխարինել «ընդերքի գործակալության պետին» բառերով, իսկ «և 5-րդ կետով» բառերը հանել.

10) 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ՝ Վարդան Գևորգյանին»:

2. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2016 թվականի փետրվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված ընդերքի տեղամասերի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգին համապատասխանեցնելու նպատակով գործողություններ իրականացնելու մասին» № 19-Ա հրամանի.

1) 1-ին կետից հանել «տրամադրման» բառը, իսկ «էներգետիկայի» բառը փոխարինել «էներգետիկ ենթակառուցվածքների» բառերով:

2) 2-րդ կետում «պետական տեսչությանը» բառերից հետո լրացնել «և ընդերքի գործակալությանը» բառերով.

3) 3-րդ կետում և 4-րդ կետի 1-ին ենթակետում «պետական տեսչության» բառերը փոխարինել «գործակալության» բառով.

4) 4-րդ կետի 1-ին ենթակետում «համապատասխանության դեպքում՝ ընդերքի տրամադրման գործակալություն ներկայացնել եզրակացություն՝ տեսչության եզրակացության հետ միասին» բառերը փոխարինել «աշխատակազմի ընդերքի գործակալություն ներկայացնել եզրակացություն» բառերով.

5) 4-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) ճշգրտված ծայրակետային կոորդինատների և ֆոնդում առկա նյութերում կոորդինատների մեջ անհամապատասխանությունների դեպքում՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախարարության աշխատակազմի ընդերքի գործակալության հետ համատեղ անցկացնել քննարկումներ՝ ճշգրտումներ կատարելու նպատակով:».

6) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Նախարարության աշխատակազմի ընդերքի գործակալության պետին՝

Սույն հրամանի 4-րդ կետի 1-ին ենթակետում նշված եզրակացությունը ստանալուց և 2-րդ ենթակետում նշված քննարկումն անցկացնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին ներկայացնել առաջարկություն՝ կցելով համապատասխան կազմակերպության թույլտվության մեջ փոփոխություններ կատարելու մասին հրամանի նախագիծը:».

7) 6-րդ կետում «ընդերքի պետական տեսչության, ընդերքի տրամադրման գործակալության պետերին» բառերը փոխարինել «ընդերքի գործակալության պետին» բառերով.

8) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1 կետ.

«7.1. Սույն հրամանով սահմանված «ցանկ 3»-ի և Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 15- թիվ 395-Ա հրամանով սահմանված «ցանկ 2»-ի հետ կապված գործողությունների իրականացման վերջնաժամկետ սահմանել 2018 թվականի դեկտեմբերի 1-ը:».

9) 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ՝ Վարդան Գևորգյանին:»:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ